

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

25 դեկտեմբերի 2012 թ.

N 563-Ն

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՈՒ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և 15-րդ հոդվածով՝

#### Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու  
ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը՝ համաձայն հավելվածի:

#### Երևանի քաղաքապետ

S. Մարգարյան

Հավելված

Երևան քաղաքի ավագանու

2012 թվականի դեկտեմբերի 25-ի

N 563-Ն որոշման

### ՁԵՎԵՐ

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՈՒ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության  
իրականացման սույն ձևերը (այսուհետ՝ կարգ) տարածվում են Երևանի քաղաքային համայնքի վարչական  
տարածքում ավտոկայանատեղի համար տուրք վճարողների (այսուհետ՝ վճարողներ) և ավտոկայանատեղերի  
կազմակերպիչների կողմից իրականացվող ավտոկայանման գործունեության նկատմամբ:

2. Երևան քաղաքի ավագանու որոշմամբ ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը «Գնումների  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված մրցույթի արդյունքում  
հաղթող ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերապահելու դեպքում վերջիններս  
իրականացնում են սույն կարգով սահմանված հսկողությունն ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու  
ավտոկայանատեղի նկատմամբ՝ Երևանի քաղաքապետի հետ կնքվող պայմանագրին համապատասխան:

3. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները ունեն Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածով սահմանված

հասկացությունների իմաստը:

4. Վճարողներն ավտոկայանատեղի տուրքը (այսուհետ՝ նաև տուրք) վճարում են անկանխիկ ձևով Երևանի  
քաղաքապետարանի հաշվեհամարին՝ հետևյալ եղանակներով.

1) բանկային և (կամ) վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով,

2) էլեկտրոնային եղանակով,

3) «sms» վճարմամբ:

5. Տուրքի վճարում կատարելու դեպքում՝ «վճարման նպատակը» դաշտում պարտադիր կերպով լրացվում է  
ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի սեփականատիրոջ ազգանունը, անունը և պետհամարանիշը՝  
ուստինատուր և ստանձ միջանայնի:

6. Ավտոկայանատեղի տուրքը վճարվում է միայն ընթացիկ տարվա համար և ընթացքում, ընդ որում՝

1) ընթացիկ տարվա տարեկան տուրքը վճարվում է տվյալ տարվա ընթացքում և համարվում է վճարված վճարման պահից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ,

2) ընթացիկ տարվա ամսական տուրքը համարվում է վճարված վճարման պահից մինչև ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթիվը: Եթե ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է այն ամսին, որը չունի համապատասխան ամսաթիվ, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը, ընդ որում.

ա. եթե տվյալ ամսվա վերջին օրը լրանում է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը, ապա վճարողները տուրքի հետագա վճարումները կարող են կատարել սույն կարգի 6-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում սահմանված շաբաթական և (կամ) օրական տուրքի վճարման հաշվարկների ձևերով,

բ. եթե տվյալ ամսվա վերջին օրը լրանում է ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ից հետո, ապա վճարված տուրքի գումարը համարվում է վճարված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ,

3) ընթացիկ տարվա շաբաթական տուրքը համարվում է վճարված վճարման պահից մինչև ժամկետի վերջին շաբաթվա համապատասխան օրը, ընդ որում.

ա. եթե տվյալ շաբաթվա վերջին օրը լրանում է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը, ապա վճարողները տուրքի հետագա վճարումները կարող են կատարել սույն կարգի 6-րդ կետի 4-րդ ենթակետում սահմանված օրական տուրքի վճարման հաշվարկի ձևով,

բ. եթե տվյալ շաբաթվա վերջին օրը լրանում է ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ից հետո, ապա վճարված տուրքի գումարը համարվում է վճարված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ,

4) ընթացիկ տարվա օրական տուրքը համարվում է վճարված վճարման պահից մինչև հաջորդ օրվա համապատասխան ժամը, ընդ որում.

ա. եթե վերջին օրը լրանում է ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ին, ապա վճարողները տուրքի հետագա վճարումները կարող են կատարել սույն կարգի 6-րդ կետի 5-րդ ենթակետում սահմանված մեկ ժամվա տուրքի վճարման հաշվարկի ձևով,

բ. եթե վերջին օրը լրանում է ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ից հետո, ապա վճարված տուրքի գումարը համարվում է վճարված մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:

5) ընթացիկ տարվա մեկ ժամվա տուրքը վճարվում է հետևյալ կերպ՝ ավտոկայանատեղում կայանելու պահից մինչև 5 րոպե տեղական տուրք չի վճարվում, իսկ 5 րոպեից ավելի կայանելու համար վճարվում է Երևան քաղաքի ավագանու որոշմամբ մեկ ժամվա համար սահմանված տուրքի դրույքաչափը՝ յուրաքանչյուր մեկ ժամի համար:

7. Հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի պահպանման համար տուրքը վճարվում է Երևան քաղաքի ավագանու որոշմամբ յուրաքանչյուր ժամի և օրվա համար սահմանված դրույքաչափի եռապատիկի չափով և սույն կարգի 6-րդ կետի 4-րդ (բացառությամբ բ) պարբերության) և 5-րդ ենթակետերով նախատեսված տուրքի վճարման հաշվարկների ձևերով և սկզբունքով: Տուրքը հաշվարկվում և վճարվում է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը հատուկ տարածքում տեղավորելու պահից:

**(7-րդ կետը փոփ. 12.02.13 N 602-Ն)**

8. Ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է անմիջականորեն և/ կամ էլեկտրոնային համակարգերի միջոցով (նկարահանող, ձայնագրանշանային համակարգեր և այլն):

9. Անմիջական հսկողությունն իրականացվում է ավտոկայանատեղի կազմակերպչի նշանակած կամ լիազորած անձի (անձերի) (այսուհետ՝ կարգավարների), իսկ էլեկտրոնային համակարգերով իրականացվող հսկողությունը՝ շրջիկ կարգավարների կամ այլ համակարգերի միջոցով:

10. Կարգավարի (շրջիկ կարգավարի) գործառույթներն են.

1) վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի կայանման համար տուրքի վճարված լինելու փաստի ստուգումը,

2) վճարման բացակայության կամ տվյալ ժամանակահատվածի համար տուրքը վճարված չլինելու դեպքում.

ա. տուգանքի վերաբերյալ արձանագրության կազմումը, եթե կարգավարը (շրջիկ կարգավարը) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձ է,

բ. տուգանքի վերաբերյալ արձանագրություն կազմելու համար Երևանի քաղաքապետին է ներկայացնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված փաստաթղթերը (ապացույցները), եթե կարգավարը (շրջիկ կարգավարը) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձ չէ:

գ. «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված ժամկետից ավելի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցն առանց համապատասխան տուրքի վճարման կայանելու դեպքում ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1282-Ն որոշմամբ սահմանված արձանագրության կազմումը, եթե ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը կամ նրա լիազորած անձը կամ այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը, չի ստանձնում պարտավորություն վճարելու տեղական տուրքն ու տուրքը չվճարելու համար օրենքով նախատեսված տուգանքը:

11. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար սահմանված տուրքը չվճարելու տուգանքի վերաբերյալ կազմվող արձանագրությունը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) տուգանվող անձի կողմից կայանած ավտոտրանսպորտային միջոցի մակնիշն ու հաշվառման

համարանիշը,

- 2) արձանագրություն կազմելու ժամանակը,
- 3) տուգանքի իրավական հիմքերը,
- 4) տվյալ ավտոկայանատեղի հասցեն,
- 5) տուգանքի չափը,
- 6) տուգանքի վճարման համար գործող բանկային հաշվեհամարը,
- 7) տուգանքը վճարողի անունը, ազգանունը, ստորագրությունը (հնարավորության դեպքում), նրա անձը

հաստատող փաստաթղթի տվյալները:

12. Սույն կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված դեպքում տուգանքի վերաբերյալ արձանագրությունը կազմվում է երկու օրինակից: Արձանագրություններից մեկը դրանք կազմելու օրը, իսկ եթե դա անհնար է, ապա այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը, փոխանցվում է Երևանի քաղաքապետին, իսկ մյուս օրինակը՝ պատշաճ ձևով ուղարկվում է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանած անձին:

13. Սույն կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերությամբ նախատեսված դեպքում տուգանքի վերաբերյալ արձանագրությունը կազմվում է երկու օրինակից Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձի կողմից՝ ավտոկայանատեղի կազմակերպչի ներկայացրած փաստաթղթերի (ապացույցների) հիման վրա, որոնցից մեկը նույն օրը, իսկ եթե դա անհնար է, ապա այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը, պատշաճ ձևով ուղարկվում է ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանած անձին:

14. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ արձանագրությունը կազմվում է նախքան ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը հատուկ տարածք տեղափոխելը ու այդ արձանագրությանը կցվում են նշված ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանած անձի տուգանման վերաբերյալ արձանագրության պատճենը և ավտոտրանսպորտային միջոցը պատշաճ կերպով պատկերող լուսանկարները:

15. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը հատուկ տարածք տեղափոխելու արձանագրությունը և կից փաստաթղթերը ավտոկայանատեղի կազմակերպիչը կամ վերջինիս կողմից լիազորված անձը փոխանցում են հատուկ տարածքի համար պատասխանատու նշանակված անձին:

**(հավելվածը փոփ. 12.02.13 N 602-Ն)**